# ԱՌՑԱՆՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

*Հունիսի 8-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ կայացել է հերթական առցանց դասախոսությունը Հայաստանի ամերիկյան համալսարանի հոգեբանների հետ, որին մասնակցել են դասախոսներ, հոգեբանական կենտրոնի աշխատակիցներ, «Հոգեբանություն» մասնագիտության ուսանողներ, մագիստրանտներ:*




Դասախոսությունները վարել են հոգեբաններ Ելենա Բարտենևան, Ելենա Սարդարյանը, Ռութ Քյուրփեյանը: Նրանք հանդես են եկել «Սպառման սինդրոմ», «Ինքնաօգնություն», «Սուպերվիզիան և անհատական թերապիան որպես հոգեբանի պրակտիկ գործունեության անհրաժեշտ պայման» թեմաներով: Հաջորդ դասախոսությունը տեղի կունենա հունիսի 15-ին ժամը 18.30-ին: Նրանք կներկայացնեն «Դեպրեսիա», «Կորստի և վշտի հաղթահարում» թեմաները: Դասախոսություններին մասնակցելու համար դիմել ԱրՊՀ հոգեբանական կենտրոնին:

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ՃԱՆԱՉԻ՛Ր ԱՐՑԱԽԸ» ԱՐՇԱՎՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

*ԱրՊՀ-ում շարունակվում է «Ճանաչի՛ր Արցախը» պատմաճանաչողական արշավների ծրագիրը, որի շրջանակում մանկավարժության և սպորտի ու բնագիտական ֆակուլտետների ուսանողներն այս անգամ այցելեցին Ուլուբաբ, որն Արցախի հին ու պատմական նշանակություն ունեցող բնակավայրերից է:*



Ուսանողները եղան Ուլուբաբի մոտակայքում գտնվող սուրբ Գևորգի վանքում, որը նաև գյուղի անունով է կոչվում: Այն 13-րդ դարի շինություն է, սակայն տարբեր ժամանակներում վերակառուցվել է: Արշավն ուներ հայրենագիտական նշանակություն, որի ընթացքում ուսանողները տեղեկություններ ստացան տեղանքի պատմության, աշխարհագրական նշանակության մասին և իրենց համար բացահայտեցին Արցախի գողտրիկ վայրերից ևս մեկը:

ԱրՊՀ ղեկավարության, ՈւՀՏԱԿ բաժնի և ուսխորհրդի ջանքերով իրականացվող ծրագիրը, որը մեկնարկել էր ուստարվա սկզբին, դրական արձագանք է գտել ուսանողների շարքերում, և մեծ պատրաստակամությամբ են ամեն անգամ ուսանողները մասնակցում ծրագրին՝ բացահայտելով Արցախը? պատմամշակութային կոթողներով ու բնության անձեռակերտ հրաշալիքներով:




| «ԱՐՑԱԽԻ ՅԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ<br>Յիմնադիր՝<br>«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ<br>Յրատարակվում է 1994 թվականից | Խմբագիր՝<br>Զարինե Սառաջյան<br>Մեր հասցեն՝<br>Մ.Գոշի 5:<br>Յեռ.՝ (047) 94 04 91 | Տպաքանակ՝ 400<br>Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում | Իմացի՛ր քո համալսարանի մասին:<br>Այցելի՛ր asu.am կայք:<br>www.asu.am |
|---|---|---|---|



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»



№ 05(233)
հունիս - 2021


# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍԻՆԴՐՈՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

*Հունիսի 25-ին Արցախի պետական համալսարանի հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Հետպատերազմյան սինդրոմներ» թեմայով հոգեբանական աշխատաժողով, որին հրավիրված էին ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, հոգեբաններ, սոցիոլոգներ և պատմաբաններ Երևանի պետական համալսարանից, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, մասնագետներ Ք.Քոքսի անվան վերականգնողական կենտրոնից, Արցախի պետական համալսարանից, Ստեփանակերտ քաղաքի դպրոցներից, հոգեբանական կենտրոններից, սպա հոգեբաններ, դասախոսներ և ուսանողներ:*



Հոգեբանական աշխատաժողովը մեկնարկել է հարգանքի տուրքով՝ ի հիշատակ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոսների:

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել է աշխատաժողովի մասնակիցներին և կարևորել նման ձևաչափով միջոցառման կազմակերպումը:

«Սույն աշխատաժողովը, համոզված եմ, որ ավելին է, քան սոսկ աշխատաժողով: Պետք է նշեմ նաև, որ ԱրՊՀ-ում հոգեբանական կրթական ծրագիրը տարեցտարի զարգանում և հաջողություններ է ունենում, բնականաբար այս օրերին կլինեն քննարկումներ նաև «Հոգեբանություն» կրթական ծրագրի զարգացման շուրջ»,- նշել է ռեկտոր Ա.Սարգսյանը՝ կարևորելով աշխատաժողովի և հոգեբան-մասնագետների դերը բնակչության շրջանում պատերազմի հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրների հաղթահարման տեսանկյունից:

Աշխատաժողովի մասնակիցներին ողջունել է ԱՀ պետնախարար Ա. Բեգլարյանը՝ նշելով, որ աշխատաժողովի թեմայի քննարկման կարիքը, հատկապես պատերազմից հետո, ընդգծված է և շատ պահանջված:

«Պատերազմից առաջ էլ հոգեբանների աշխատանքը համակարգելու, բարելավվելու, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու կարիք, միանշանակ, կար: Եթե մենք արագ չհաղթահարենք հետպատերազմյան սոցիալ-հոգեբանական խնդիրները, ապա շատ ավելի դանդաղ կզարգանանք»,- իր խոսքում նշել է Ա. Բեգլարյանը՝ հավելելով, որ կարևորում է երկու ինստիտուտների՝ սոցիալական աշխատողի և հոգեբանի կայացումն ու սերտ համագործակցությունը, որը ՀՀ-ում ձևավորված մասնագիտական համայնքի աջակցությամբ Արցախում կարող է ապահովել արդյունավետություն:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լ. Ղարախանյանը, խոսելով պատերազմի հետևանքով Արցախի կրթամշակութային համակարգի կրած կորուստների մասին, նշել է, որ կրթության ոլորտը Արցախում ինքնակազմակերպվել է և չի ծախողվել: «Վերականգնվում ենք, շատ ծանր էտապներով ենք անցնում, բայց կարող ենք ասել, որ երկիրը ստեղծված ճգնաժամից հանելու գործում մեծ է նաև մտավորականների ու կրթամշակութային կյանքի դերը»,- նշել է նախարար Լ.Ղարախանյանը՝ հավելելով, որ բոլորս պետք է նպատակներ ունենանք, կոնկրետ քայլեր և տեսլական, որպեսզի տեր կանգնենք այն ամենին, ինչը մեզ է պատկանում:

➥ 2



1 ➥ Արցախի պետական համալսարանի անցած ուղու և առկա մարտահրավերների մասին խոսել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը՝ նշելով, որ համալսարանն իր կայացման ճանապարհին հաղթահարել է դժվարագույն մարտահրավերներ և ունեցել մի շարք ձեռքբերումներ:

«Այսօրվա աշխատաժողովի նպատակն է հետպատերազմյան ստեղծված իրավիճակից և առկա խնդիրներից ելքեր և ուղիներ որոնելն ու գտնելը»,- նշել է Վ.Յարամիշյանը:ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը, կարևորելով հոգեբանության դերը, նշել է, որ պետք է սովորենք պատմությունից դասեր քաղել և մեր միասնականությամբ հաղթահարենք ազգային ու պետական հիմնախնդիրները:

«Ես վստահ եմ, որ Արցախը, անշուշտ, ոտքի կկանգնի և համախմբվածության արդյունքում մեր կորցրածը անպայման հետ կվերադարձնենք՝ չմոռանալով և հաշվի առնելով մեր անցած ուղին և մեր պատմությունը»,-նշել է Է.Մինասյանը՝ հավելելով, որ ամենամեծ դասը բոլորիս համար պետք է լինի պետականության ամրապնդման դասը:

ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ Միրա Անտոնյանը աշխատաժողովին ներկայացրել է «Հոգեկան առողջության պահպանման համակարգի ներդրումը Արցախում» հայեցակարգը՝ խոսելով նաև սոցիալական աշխատողի ներդրման ծրագրի մասին: Նրա խոսքով հայեցակարգը քննարկվել է ԱՀ կառավարությունում և արժանացել է հավանության. այժմ ծրագիրն իրականացնելու համար ասոցիացիան դոնորներ է փնտրում:

«Հեռանկարում ունենք բոլոր մասնագետներին վերապատրաստելու ծրագիր՝ տալով նրանց առաջին հոգեբանական օգնություն ցուցաբերելու հմտություններ՝ մարդկանց դիմակայունությունը բարձրացնելու համար»,- նշել է Մ. Անտոնյանը:

Ելույթներով հանդես են եկել նաև Ալեքսան Բաղդասարյանը (ԵՊՀ), Հրանտ Ավանեսյանը (ԵՊՀ), Անահիտ Սահակյանը (ԵՊՀ), Արզիկ Մխիթարյանը (ԱրՊՀ), Վարդան Թադևոսյանը (Ք.Քոքսի անվ. վերականգնողական կենտրոն), Մարինե Միքայելյանը (Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ),Աննա Խաչատրյանը (Խ.Աբովյանի անվ ՀՊՄՀ), Նաիրա Հարությունյանը (Խ.Աբովյանի անվ ՀՊՄՀ), Անահիտ Լալայանը («Էմպաթիա» հոգ. կենտրոն), Մարիամ Գասպարյանը (ԱրՊՀ ասպիրանտ), հոգեբաններ ԳԹԿ-ից և ՊԲ-ից:



Աշխատաժողովի ընթացքում կայացել է նաև կլոր-սեղան քննարկում, որից հետո ամփոփվել են աշխատաժողովի արդյունքները և հրապարակվել է հայտարարության տեքստ:



# ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



***2020-2021 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հերթական արարողությունը տնտեսագիտության ֆակուլտետում էր, որին ներկա էին ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Սահակյանը, դեկան Ռուզաննա Մանգասարյանը, ամբիոնների վարիչներ և շրջանավարտներ:***

Արարողությունը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ հարգանքի տուրք մատուցելով Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների հիշատակին:

2020-2021 ուստարում ԱրՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը թողարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի 116 շրջանավարտ, որից 87-ը բակալավրիատի և 29-ը մագիստրատուրայի կրթական աստիճաններով: Բակալավրիատի կրթական աստիճանով գերազանցությամբ ավարտել է 20 շրջանավարտ, իսկ մագիստրատուրայի կրթական աստիճանով՝ 14 շրջանավարտ:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, շնորհավորելով բոլոր շրջանավարտներին, նշել է, որ այսօր ուսանողները ստանում են մի փաստաթուղթ, որը վկայում է նրանց բարձր որակի մասնագետներ լինելու փաստը:

«Կյանքի մի նոր փուլ եք մուտք գործում, որտեղ խոչընդոտների և բարդությունների կհանդիպեք: Պետք է պատրաստ լինեք Ձեր ունեցած գիտելիքներով և կարողություններով այդ ամենը հաղթահարելուն և առաջ շարժվելուն»,- նշել է Գ. Սահակյանը:

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի համակազմին՝ պատերազմի հետևանքով կրթական ոլորտում առաջացած մարտահրավերները միասնական համախմբվածությամբ հաղթահարելու համար:

«Ցանկանում եմ, որ այսօրվա վկայականները Ձեզ համար լինեն ոչ թե զուտ փաստաթղթեր, այլ բարեկեցության գրավական, հպարտության և ինքնահաստատման փաստաթուղթ: Մաղթում եմ, որ այն ձեռքբերումները, որոնք ունեցել եք այս ուսումնական տարիների ընթացքում, ծառայեցնեք միայն ու միայն Արցախ աշխարհում»,- նշել է Ռ.Մանգասարյանը:

«Ձեր ուսումնառության վերջին տարին լի էր պարտադրված դժվարություններով, կորուստներով և ցավով: Ուզում եմ շնորհավորել բոլորիդ այդ ամենը պատվով հաղթահարելու համար և բարի երթ մաղթել բոլորիդ»,- նշել է ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ.,դոցենտ Նարինե Ավանեսյանը:

Շրջանավարտներին ուսումնական գործընթացն ավարտելու և համապատասխան փաստաթղթեր ձեռք բերելու կապակցությամբ շնորհավորել է նաև տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Շուշանիկ Ասրյանը՝ նշելով. «Այս ժամանակահատվածում Ձեր դասախոսները Ձեզ հետ անցել են ոչ միայն գիտության, այլ նաև ընկերության, նվիրվածության և կյանքի իսկական ուղի: Եվ կարելի է ասել, որ այդ բոլորի արդյունքը նաև այսօրվա գեղեցիկ արարողությունն է»:

«Ֆինանսներ ըստ ոլորտի» մասնագիտության բակալավրիատի ծրագիրը գերազանցությամբ ավարտած ուսանողուհի Ասպրամ Մայիլյանը շնորհակալություն է հայտնել համալսարանի ղեկավարությանն ու դասախոսական կազմին:

«Այս տարիների ընթացքում ես ստացել եմ ոչ միայն մասնագիտական-տեսական, այլ նաև գործնականում կիրառելի գիտելիքներ: Ուրախ եմ, որ ավարտել եմ հենց Արցախի պետական համալսարանը»,- նշել է Ա. Մայիլյանը՝ հավելելով, որ բուհից ստացած գիտելիքները ապագայում նախատեսում է կիրառել հենց Արցախում:

Ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնի վարիչ, մ.գ.թ. Սուսաննա Հայրապետյանը, շնորհավորելով շրջանավարտներին, ընդգծել է, որ ամբիոնը մշտապես պատրաստակամ է աջակցելու և ուղղորդելու նրանց: Դիմելով շրջանավարտներին՝ նա ասել է. «Ձեր գործունեությամբ միշտ բարձր պահեք մեր զոհված տղաների պատիվը, հաջողություններ եմ մաղթում բոլորիդ, հատկապես այն շրջանավարտներին, ովքեր ընդգրկված են ուժային կառույցներում, որովհետև ձեզ վերապահված է կարևոր առաքելություն՝ հայրենիքի պաշտպանության սուրբ գործը»:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի մագիստրատուրան գերազանցությամբ է ավարտել Անժելա Ղայամյանը: Նա շնորհակալական խոսք է հայտնել ֆակուլտետի անձնակազմին և համալսարանին՝ նշելով. «Այս վեց տարիների ընթացքում մենք ստացանք մեզ անհրաժեշտ բոլոր գիտելիքները և այսօրվանից կսկսենք դրանք կիրառել գործնականում: Հուսով ենք, որ Ձեր հովանավորության և աջակցության շնորհիվ կհասնենք ավելի մեծ հաջողությունների»,- նշել է Ա. Ղայամյանը:

Շրջանավարտներն իրենց ավարտական վկայականները ստացել են պրոռեկտորի, դեկանի և ամբիոնների վարիչների ձեռքից:

# ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

***2020-2021 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հերթական արարողությունը պատմության և իրավագիտության ֆակուլտետում էր, որին ներկա էին ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վ. Ավանեսյանը, ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանը, ամբիոնների վարիչներ և շրջանավարտներ:***



2020-2021 ուստարում ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետը թողարկել է բակալավրիատի և մագիստրատուրայի 101 շրջանավարտ, որից 71-ը՝ բակալավրիատի, 30-ը՝ մագիստրատուրայի կրթական աստիճաններով: Բակալավրիատի կրթական աստիճանով գերազանցությամբ ավարտել են 13 շրջանավարտ, իսկ մագիստրատուրայի կրթական աստիճանով՝ 10 շրջանավարտ:

ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վ. Ավանեսյանը շնորհավորել է բոլոր շրջանավարտներին՝ նշելով. «Ուսումնառության տարիները ձեր կյանքի ոսկե էջերից են: Այդ տարիների ընթացքում դուք ստացել եք ձեզ անհրաժեշտ գիտելիքները, և ես ուզում եմ, որ դրանք օգտագործեք միայն խաղաղության պայմաններում՝ միշտ պատվով կրելով մայր բուհի շրջանավարտի կոչումը»,- նշել է Վ.Ավանեսյանը: Ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանը, շնորհավորելով համալսարանի շրջանավարտներին, կոչ է արել բոլորին իրենց կյանքի և հետագա գործունեության ամբողջ ընթացքում բարձր նահատակված հերոսների անունն ու պատիվը:

«Բոլոր շրջանավարտներին մաղթում եմ, որ այսօրվա ստացած վկայագրերը կարողանան ծառայեցնել մեր հայրենիքի շենացմանը և ի զորու լինեն այս անդառնալի կորուստների շրջանում մեր պետականության հետագա զարգացման ընթացքը ապահովել»,- նշել է ֆակուլտետի դեկանը:

Իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտի պաշտոնակատար Գրետա Արզումանյանը նշել է, որ այն մեր պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում անհրաժեշտ և պահանջված մասնագիտություններից մեկն է:

«Այսօր դուք ստանում եք տարիներ ի վեր ձեր կատարած աշխատանքի ու վաստակի վկայականը: Հույս ունենք, որ ձեր ստացած գիտելիքները դուք կկիրառեք ձեր մասնագիտական կյանքում և կգնահատեք մեր տարիների ներդրած աշխատանքը»,- նշել է Գ. Արզումանյանը:

Շրջանավարտներն իրենց ավարտական վկայականները ստացել են պրոռեկտորի, դեկանի և ամբիոնների վարիչների ձեռքից:



# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԾ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

*Հունիսի 3-ին հրավիրվել է պատմության և իրավագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Արմինե Խաչատրյանը ներկայացրել է 2019-2020 ուսումնական տարում ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, և տեղի է ունեցել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրության արարողություն:*



Դեկան Ա. Խաչատրյանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետի կառուցվածքը և նրա կառավարման համակարգը, կրթական գործունեության կազմակերպումը, ուսումնամեթոդական գործունեությունը, ուսանողների կատարած գիտական աշխատանքը, դաստիարակչական ու կրթական ժամանցը, համագործակցությունը և ինքնավերլուծությունը՝ ուժեղ ու թույլ կողմերով:

«2019-2020 ուստարում ֆակուլտետի ուսանողության թիվը կազմում էր 411, որից 227- ը բակալավրիատի, 59 մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում, 122-ը՝ հեռակա ուսուցման համակարգում: Ֆակուլտետում ձևավորված էր 32 խումբ. բակալավրիատի 4 մասնագիտությունների գծով առկա էր 23 խումբ՝ 13-ը առկա, 10-ը հեռակա, 5 մասնագիտացումներով՝ մագիստրատուրայի 9 խումբ, որոնցից մեկը՝ հեռակա»,-նշել է դեկանը՝ ներկայացնելով նաև տարվա ընթացքում իրականացված բազմաբնույթ այն միջոցառումները, որոնք միտված են եղել կրթադաստիարակչական, գիտահետազոտական, ուսումնական գործընթացի բարելավմանը, միջբուհական, բուհ-դպրոց կապերի ամրապնդմանը, հասարակությանը կրթագիտական արժեքներ փոխանցելուն և այլ առանցքային ոլորտների:

Դեկանը ներկայացրել է նաև ֆակուլտետի թույլ և ուժեղ կողմերը, թույլ կողմերի բարելավման տեսլականը և նախանշել անելիքները: Թույլ կողմերի հաղթահարման համար նա ընդգծել է ֆակուլտետ-գործատու գործակցության ամրապնդման անհրաժեշտությունը:

Հաշվետվության շուրջ ելույթներ են ունեցել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, ֆակուլտետի ամբիոնների վարիչներ, ի.գ.թ., դոցենտ Գրետա Արզումանյանը, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանը, ԼՂՀ վաստակավոր նկարիչ, պրոֆեսորի պաշտոնակատար Լավրենտ Ղալայանը, դասախոս, փ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբյանը, ովքեր բարձր են գնահատել 2019-2020 ուստարում ֆակուլտետի կատարած աշխատանքը:



Հաշվետվությունը գնահատվել է բավարար:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի համակազմին ու դեկան Ա. Խաչատրյանին՝ իրականացրած աշխատանքի համար և ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել ֆակուլտետի աշխատանքներում ակտիվություն ցուցաբերած, համալսարանի զարգացման գործում ավանդ ունեցած դասախոսների և աշխատակիցների:

# ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԾ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ



*Հունիսի 4-ին հրավիրվել է բնագիտական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում ֆակուլտետի դեկան, ք.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Վալոդյա Միրզոյանը ներկայացրել է 2019-2020 ուսումնական տարում ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, և տեղի է ունեցել ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրության արարողություն:*

Դեկան Վ. Միրզոյանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետի կառուցվածքը և նրա կառավարման համակարգը, կրթական գործունեության կազմակերպումը, ուսումնամեթոդական գործունեությունը, ուսանողների կատարած գիտական աշխատանքը, կրթական ժամանցը, համագործակցությունը և ինքնավերլուծությունը՝ ուժեղ ու թույլ կողմերով:

«Բնագիտական ֆակուլտետի առաքելությունը մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինը կարևորող, արհեստավարժ, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մասնագետների պատրաստումն է: Բնագիտական ֆակուլտետի տեսլականը՝ բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձրորակ մշակույթի ձևավորումը, մատուցող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշների: Բնագիտական ֆակուլտետի շրջանավարտը պետք է լինի համակողմանի զարգացած, պետական մտածելակերպով օժտված քաղաքացի և հարգի պետական խորհրդանիշները»,-նշել է դեկանը՝ ներկայացնելով նաև տարվա ընթացքում իրականացված բազմաբնույթ այն միջոցառումները, որոնք միտված են եղել կրթադաստիարակչական, գիտահետազոտական, ուսումնական գործընթացի բարելավմանը, միջբուհական, բուհ-դպրոց կապերի ամրապնդմանը, հասարակությանը կրթագիտական արժեքներ փոխանցելուն և այլ առանցքային ոլորտների:

Դեկանը ներկայացրել է նաև ֆակուլտետի թույլ և ուժեղ կողմերը, թույլ կողմերի բարելավման տեսլականը և նախանշել անելիքները: Թույլ կողմերի հաղթահարման համար նա ընդգծել է թեստերի որակի բարելավումը, նյութատեխնիկական բազայի համալրումը, լաբորատորիաների ստեղծումն ու հզորացումը, հեռակա բաժնի հետ տարվող աշխատանքների ուժեղացումը, մատուցվող նյութի որակի շարունակական բարելավումը:

Հաշվետվության շուրջ ելույթներ են ունեցել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, ֆակուլտետի ամբիոնների դասախոսներ Կարեն Արամյանը, Ռուբինա Թովմասյանը, Գայանե Պետրոսյանը, Մայա Ծատրյանը, ովքեր բարձր են գնահատել 2019-2020 ուստարում ֆակուլտետի կատարած աշխատանքը: Հաշվետվությունը գնահատվել է բավարար:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի համակազմին ու դեկան Վ. Միրզոյանին՝ իրականացրած աշխատանքի համար և ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել ֆակուլտետի աշխատանքներում ակտիվություն ցուցաբերած, համալսարանի զարգացման գործում ավանդ ունեցած դասախոսների և աշխատակիցների:





➥ 8 «Մայր բուհը հպարտ է, որ ունի նման շրջանավարտներ և ակնկալիքներ շատ ունի ձեզնից: Լավ անձնավորություն և լավ մասնագետներ եղեք, և հաջողությունները Ձեզ ուղեկից կլինեն»,- նշել է Վ. Յարամիշյանը՝ հավելելով, որ մայր բուհը սպասում է նաև հետադարձ կապի սկզբունքի պահպանմանը:

Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լ.Մարգարյանը, շնորհավորելով շրջանավարտներին, ընդգծել է, որ այսօր բոլորին վստահված է մի կարևոր առաքելություն՝ վերադարձնել այն իրականությունը, ինչ ունեցել են բուհին ընդունվելու տարիներին:



«Ուսումնական տարին բարդ էր բոլոր առումներով, բայց շնորհիվ մեր և ուսանողության կամքի, ինքնակազմակերպվածության համառ ջանքերի, մենք կարողացանք ավարտել այն հնարավորինս լիարժեք՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները»,- նշել է Լ. Մարգարյանը:

# ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



*Հունիսի 18-ին տեղի է ունեցել մանկավարժության և սպորտի ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը, որին ներկա էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, դեկան Շահեն Այդինյանը, ամբիոնների վարիչներ, շրջանավարտներ: 2020-2021 ուստարում ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետը թողարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի 117 շրջանավարտ, որից 98-ը բակալավրիատի և 19-ը մագիստրատուրայի կրթական աստիճաններով: Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններով առկա և հեռակա ուսուցման համակարգում բուհը գերազանցությամբ ավարտել է 8 շրջանավարտ:*

Բուհն ավարտելու կապակցությամբ շրջանավարտներին շնորհավորել է պրոռեկտոր Վ. Յարամիշյանը:

«Մեր շրջանավարտներն ունեն բոլոր նախադրյալները, կարողություններն ու հմտությունները երկրի զարգացմանը նպաստելու համար: Դուք կրթելու և դաստիարակելու եք սերունդ, իսկ դրանից ավելի վեր և պատվաբեր առաքելություն երևի դժվար է գտնել»,- ասել է նա:

Ֆակուլտետի դեկան, ավագ դասախոս Շ. Այդինյանը իր հերթին շնորհավորել է բոլոր շրջանավարտներին՝ նշելով, որ համալսարանը հպարտանում է նման սերունդ ունենալու և այդ սերնդին բարձրագույն կրթություն տալու գործում իր ներդրումն ունենալու համար:

«Բոլորիս համար այսօր հիշարժան օր է, քանի որ հետպատերազմյան առաջին շրջանավարտների խումբն եք: Ուսումնական տարին պատերազմական էր, բայց այդ ամենով հանդերձ մենք միասին կարողացանք հասնել եզրագծին»,- նշել է ֆակուլտետի դեկան Շ. Այդինյանը՝ մայր բուհի բոլոր շրջանավարտներին մաղթելով մասնագիտական հաջողություններ և ձեքբերումներ:

«Հույսով և հավատով լեցուն ենք, որ վաղը ձեզ կտեսնենք նաև մեր դասախոսական շարքերում: Կոչ եմ անում բոլորիդ որպես Արցախի պետական համալսարանի շրջանավարտներ միշտ բարձր պահել մայր բուհի և մեր ֆակուլտետի պատիվը»,- նշել է մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Է. Բաղդասարյանը: ➥ 10

# ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*2020-2021 ուստարում ԱրՊՀ-ն թողարկում է 659 շրջանավարտ, որից 500-ը՝ բակալավրիատի, 159-ը մագիստրատուրայի: Բակալավրիատը գերազանցությամբ ավարտում է 78 շրջանավարտ, մագիստրատուրան՝ 56 շրջանավարտ:*



Հունիսի 16-ին ԱրՊՀ-ում կայացել է բնագիտական ֆակուլտետի 2020-2021 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը, որին ներկա էին ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, դեկան Վալոդյա Միրզոյանը, ամբիոնի վարիչներ, շրջանավարտներ: 2020-2021 ուստարում ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետը թողարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի 155 շրջանավարտ:

Արարողությունը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ. ուսանողները ծաղիկներ են խոնարհել 44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների հուշատախտակին:

Շնորհավորելով բոլոր շրջանավարտներին բուհն ավարտելու կապակցությամբ՝ պրոռեկտոր Գ. Սահակյանը մաղթել է հաջողություններ անձնական և աշխատանքային գործունեության ընթացքում:

«Եթե ուսանողական տարիներին գիտելիք ստանալու ճանապարհին աշխատել եք օրվա ընթացքում մի որոշակի ժամանակաշրջան, ապա ավարտելուց հետո ինքնակրթությունը պետք է դարձնեք տևական գործընթաց»,- ասել է պրոռեկտորը:

Բնագիտական ֆակուլտետի դեկան, ք.գ.թ., պրոֆեսոր Վալոդյա Միրզոյանը, շնորհավորելով շրջանավարտներին, ընդգծել է, որ լավ մասնագետ դառնալուց բացի, պետք է լինել նաև հայրենիքի համար արժանի քաղաքացիներ և խորհուրդ տվել աշխատանքային գործունեություն ծավալել Արցախում:

«Վստահ եմ, որ Արցախի պետական համալսարանը կարողացել է տալ այն անհրաժեշտ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնց շնորհիվ մեր շրջանավարտները դառնալու են աշխատաշուկայի համար պահանջված մասնագետ և իրենց գործունեությամբ նպաստելու են մեր հայրենիքի շենացմանը»,-նշել է Վ. Միրզոյանը:

Շրջանավարտներն իրենց դիպլոմները ստացել են պրոռեկտորից, ֆակուլտետի դեկանից և ամբիոնների վարիչներից:

# ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

*Հունիսի 17-ին տեղի է ունեցել բանասիրական ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը, որին ներկա էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, դեկան Լուսինե Մարգարյանը, ամբիոնների վարիչներ, շրջանավարտներ: 2020-2021 ուստարում ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետը թողարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի 165 շրջանավարտ, որից 130-ը բակալավրիատի և 35-ը մագիստրատուրայի կրթական աստիճաններով: Բակալավրիատի կրթական աստիճաններով հինգ մասնագիտությունների գծով առկա և հեռակա ուսուցման համակարգում գերազանցությամբ ավարտել է 22 շրջանավարտ, իսկ մագիստրատուրայի կրթական աստիճանով՝ 12 շրջանավարտ:*

ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը շնորհավորել է բոլոր շրջանավարտներին, դասախոսական կազմին և ֆակուլտետի ղեկավարությանը՝ բարի երթ և հաջողություններ մաղթելով հետագա մասնագիտական գործունեության ոլորտում և անձնական կյանքում:

➥ 9



# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԾ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ



*Հունիսի 9-ին գումարվել է ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր, և տեղի է ունեցել պարգևատրման արարողություն:*

Ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը նիստի օրակարգային հարցերով ներկայացրել է 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ ստուգման արդյունքների և ուսումնական պլաններում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվություն:

Վերլուծելով ստուգումների ընդհանուր արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշները՝ դեկանը ի հայտ եկած թերությունները շտկելու նպատակով համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարականներ է տվել՝ մասնավորապես նշելով քննական թեստերի վերանայման անհրաժեշտությունը:

Խոսելով ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների մասին՝ դեկանը նշել է, որ ֆակուլտետում ուսումնական պլանները պարբերաբար փոփոխվում են՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին:



«Ուսուցման գործընթացում մենք խնդիր ունենք տեսական նյութը կապելու տվյալ մասնագիտության գործնական կարողությունների հետ, զարգացնելու գործնական հատկանիշները»,-ընդգծել է դեկանը՝ շեշտելով մասնագիտական կրթական ծրագրերը ձևավորելու ընթացքում գործնական կարողությունների զարգացմանն առանցքային տեղ հատկացնելն ու ըստ այդմ՝ հստակեցնել տվյալ ՄԿԾ վերջնարդյունքները:

Նիստն ամփոփվել է հաճելի արարողությամբ. ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով կատարված աշխատանքների համար և առկա խնդիրների լուծման շուրջ հանձնարարականներ տալով համապատասխան ստորաբա-



ժանումներին, ԱրՊՀ 50-ամյակի հուշամեդալով պարգևատրել է համալսարանի զարգացման գործում ավանդ ունեցած դասախոսների և աշխատակիցների:

Շնորհակալություն հայտնելով պարգևատրման համար՝ ԱրՊՀ պրոֆեսոր, հ.գ.թ. Արգիկ Մխիթարյանը նշել է, որ պարգևը խորհրդանշական է նրանով, որ վկայում է բուհի կեսդարյա պատմությունը:

«Մենք պատրաստակամ ենք մեր ներուժը ծառայեցնելու մեր հայրենիքին, մայր բուհին: Հայրենիքի պաշտպանության բնագծերը անցնում են նաև համալսարանով»,-նշել է Ա. Մխիթարյանը՝ ընդգծելով բուհի ներուժը հաղթանակներ արձանագրելու գործում:

# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՍԱՄՎԵԼ ՄՀԵՐՅԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



*Հունիսի 4-ին Արցախի պետական համալսարանում կայացել է «Խնուս» մշակութային հիմնադրամի տնօրեն, գրող Սամվել Միերյանի «Եւ եղաւ լոյս» և «Այբ Քէ» գրքերի շնորհանդեսը: Հանդիպմանը ներկա էին համալսարանականներ, հոգևոր դասի ներկայացուցիչներ, զինվորականներ և մամուլի ներկայացուցիչներ: Միջոցառումը սկսվել է տերունական աղոթքով:*

Սամվել Միերյանի գրչին են պատկանում «Եւ եղաւ լոյս» պատմավեպը, «Ճշմարիտ Լույսը» և «Անտառի գերին» բանաստեղծությունների ժողովածուն, «Այբ-Քէ» աղոթական բանաստեղծությունների ժողովածուն: Հեղինակը ընթերցողներին հայտնի է իր «Մենավոր բազեն» պատմավեպով, որում ներկայացրել է Արևմտյան Հայաստանի Խնուս գավառում կատարված իրադարձությունների պատմական-գեղարվեստական նկարագրությունը: Նա նաև պատմափաստագրական երկու ֆիլմերի հեղինակ է:

Շնորհանդեսը ողջույնի խոսքով բացել է ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը:

«Սամվել Միերյանը, լինելով մեծ հայրենասեր, «Խնուս» մշակութային հիմնադրամի տնօրեն, իրականացնում է հայրենանվեր գործունեություն: Հիմնադրամը հայրենակցական կազմակերպություն է և աշխարհին պատմում է հայոց ցեղասպանության մասին, իրականացնում պատմական արդարություն և ճշմարտացիություն տարածելու գործառույթ»,- նշել է բ.գ.թ., դոցենտ Զ. Սառաջյանը` հավելելով, որ հեղինակն իր ստեղծագործությունների առանցքում է պահել հայրենիքն ու Աստծուն, և նրա աշխատանքներն ազգային արժեքները քարոզելու նշանակությամբ են առանձնահատուկ:

Բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Խանյանը, խոսելով հեղինակի աղոթական բանաստեղծությունների ժողովածուի մասին, նշել է, որ հեղինակն իր առաջին քայլերը սկսել է Գ. Նարեկացուց` հավելելով. «Հայ ազգի համար սրտացավ մի բանաստեղծ, ով հանուն իր ազգի փրկության դիմում է Աստծուն` իր վրա վերցնելով մարդկային մեղքերը: Սամվել Միերյանն իր «Այբ Քէ» աղոթական բանաստեղծությունների շարքով ապացուցեց, որ որպես բանաստեղծ ունի հարուստ բառապաշար, պատկերավոր մտածողություն և միանգամայն տարբերվող գեղարվեստական ոճ»:

«Եւ եղաւ լոյս» պատմավեպի մասին խոսել է գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ Ն. Դավթյանը` նշելով, որ պատմավեպի ժանրային գլխավոր հատկանիշներից մեկը նրա` որևէ կանոնի չենթարկվելու ազատությունն է և ներժանրային բազմազանությունը` պատմական, կենսագրական, հոգեբանական, սոցիալական տարրերով:

«Պատմավիպասան Ս. Միերյանի «Եւ եղաւ լոյս» վեպին, նրա կերպարակերտմանը, խոսքարվեստին, բառաբարդումներով հեղինակային նորաբանություններին կանդրադառնան լեզվաբանները և գրաքննադատները` տալով արժանի գնահատական»,-իր խոսքում նշել է Ն.Դավթյանը:

Սամվել Միերյանը շնորհակալություն է հայտնել միջոցառման ներկաներին և նախաձեռնողներին կայացած հանդիպման, ինչեցրած բանախոսությունների և ելույթների համար. «Ինձ համար այսօրվա միջոցառումն առանձնացավ իր յուրահատուկ հուզականությամբ: Առանձնահատուկ կարևոր եմ համարում այն հանգամանքը, որ միջոցառումը կազմակերպվում է Արցախում: Այսօր բոլորս աղոթքի կարիք ունենք»:





# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ



*Հունիսի 7-ին Արցախի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ հանդիպում է ունեցել ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը: Հանդիպմանը ներկա էին տարբեր կրթական ծրագրերով սովորող ուսանողներ:*

Վ. Յարամիշյանը ներկաների հետ քննարկել է հեռակա ուսուցման գործընթացի, ուսանողների իրավունքների և պարտականությունների, ուսանողական ինքնավար կառույցների և համալսարանական կյանքի հետ կապված մի շարք հարցեր:

Ուսանողները ծանոթացել են համալսարանում ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով համապատասխան ստորաբաժանումներին, իրազեկվել, թե ինչպես կարող են ստանալ իրենց հուզող հարցերի պատասխաններն ու հանդես գալ առաջարկություններով:

Պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, կարևորելով հեռակա ուսուցման համակարգի ուսանողների դերը համալսարանի զարգացման գործում, կոչ է արել ներկաներին իրենց անմիջական մասնակցությունն ու ներգրավվածությունն ունենալ համալսարանական միջոցառումներին` ապահովելով նաև ակտիվ հետադարձ կապի սկզբունքը:

«Ուսանողների առաջարկություններն ու կարծիքները միշտ էլ բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում են եղել: Թե՛ առկա, թե՛ հեռակա համակարգում սովորող ուսանողների համար ստեղծված են հավասար պայմաններ, ուստի ձեզնից կախված է լինել ակտիվ և նախաձեռնող»,-իր խոսքում նշել է Վ. Յարամիշյանը:

# «ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԸՆԿԱԼՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

*Հունիսի 10-ին Շուշիի Կերպարվեստի թանգարանի և ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է դասախոսություն-քննարկում` «Արվեստի ստեղծագործությունների ստեղծման և ընկալման հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով:*



«Շուշի քաղաքի թանգարանների» ՊՈԱԿ տնօրեն Լուսինե Գասպարյանը նշել է, որ արվեստի ստեղծագործությունների ընկալման պրոցեսը շատ բարդ է ու հակասական: Միջոցառումը յուրօրինակ փորձ է անդրադառնալ ստեղծագործական հոգեբանությանը, արվեստագետի ասելիքի հոգեբանական վերլուծությանը: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Արմինե Ավանեսյանը, անդրադառնալով հոգեբանության և արվեստի կապին, նշել է. «Հոգեբանությունն այն գիտությունն է, որը ներ է թափանցել մարդու գործունեության, ինքնաարտահայտման բոլոր ոլորտները, օգնում է դիտել անտեսանելին, ճանաչել շրջապատն ու սեփական անձը: Արվեստը ևս իմացության ու ճանաչողության բացառիկ հնարավորություն է այն ստեղծողների և ընկալողների համար»:

«Հոգեբանություն» մասնագիտության 1-ին կուրսի մագիստրանտներն իրենց ելույթներում անդրադարձել են գեղարվեստական ընկալման հոգեբանական խնդիրներին, արվեստագետի ստեղծագործական գործընթացի օրինաչափություններին և դաստիարակչական ֆունկցիաներին: Վ. Յարամիշյանը կարևորել է նմանատիպ միջոցառումները, որոնք յուրօրինակ շփման հարթակ են ստեղծում արվեստագետի և հոգեբանի միջև: